ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2020թ. N 143-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ ու 55-րդ կետերի և հիմք ընդունելով Լավրենտի Մուրադյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Լավրենտի Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Նուռնուս-այգեգործական զանգված թիվ 342 (վկայական՝ 2614746, տրված՝ 2009 թվականի մայիսի 07-ին, ծածկագիր՝ 07-051-0112-0003) հասցեի անշարժ գույքը վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Կոտայք թաղամաս 2-րդ փողոց 342:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2020թ. N 144-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՍԱՆ ՀԱՆԳՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման և 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-11-րդ և 13-րդ կետերի, հաշվի առնելով, որ սան հանգույցը կառուցված չի Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և հիմք ընդունելով N 14062019-07-0005 սեփականության վկայականն ու Գարիկ Հովակիմի Ստեփանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Գարիկ Հովակիմի Ստեփանյանին (ծնված՝ 1981 թվականի նոյեմբերի 07-ին) սեփականության իրավունքով պատկանող մարզ Կոտայք համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 47/50 հասցեում գտնվող 0.02 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում (ծածկագիր՝ 07-003-0031-0003) ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակությամբ 1.0 քմ արտաքին (0.5 քմ ներքին) մակերեսով սան հանգույցը ճանաչել օրինական:

2. Գարիկ Հովակիմի Ստեփանյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 2100 (երկու հազար հարյուր) դրամ սույն որոշման 1-ին կետում նշված 1.0 քմ արտաքին մակերեսով սան հանգույցի օրինականացման վճար:

3.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Հաստատել որոշման անբաժանելի մասը կազմող «Տիգրան Լևոնյան» անհատ ձեռնարկատիրոջ տված հողամասի ու շինության հատակագիծը:

5.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. հունիսի 01
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հունիսի 2020թ. N 145-Ա

ՊԱՏՇԳԱՄԲԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի և հիմք ընդունելով Գոհար Գենադիի Հունանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Թույլատրել Գոհար Գենադիի Հունանյանին կատարելու իրեն սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 15 շենք թիվ 9 բնակարանի (վկայական N 1120737, ծածկագիր 07-003-0034-0005-004-009) պատշգամբի ընթացիկ նորոգում թեթև կոնստրուկցիաներով՝ առանց նախագծային փաստաթղթերի:

2.Գոհար Գենադիի Հունանյանին՝ համայնքապետարանի 900105202510 հաշվեհամարին վճարել 3000 (երեք հազար) դրամ՝ ընթացիկ նորոգման թույլտվության ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. հունիսի 02
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հունիսի 2020թ. N 146-Ա

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 25-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 138-րդ և 139-րդ կետերի ու հիմք ընդունելով «Կապելո Բիանկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արմեն Սարջանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.«Կապելո Բիանկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող մարզ Կոտայք համայնքի Բյուրեղավան գյուղ Ջրաբեր 1-ին փողոց 48 հասցեի հողամասում (ծածկագիր՝ 07-055-0212-0091) կառուցված արտադրական նպատակային նշանակության բաց բունկերների և ջրավազանի համար տալ ավարտական ակտ (շահագործման թույլտվություն):

2.«Կապելո Բիանկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ համայնքապետարանի 900105202163 հաշվեհամարին վճարել 20 000 (քսան հազար) դրամ տեղական վճար՝ շահագործման թույլտվության ձևակերպման համար:

3.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ գրանցում կատարելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. հունիսի 02
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հունիսի 2020թ. N 147-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ և 22.1-րդ կետերի, հաշվի առնելով, որ այգետնակը, անասնաշենքը, ծածկը, ջրավազանը, աստիճանն ու պարիսպները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և հիմք ընդունելով N 03032020-07-0011 սեփականության վկայականը, չափագրման հատակագծերը, շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունն ու Դավիթ Գավրուշի Գրիգորյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Դավիթ Գավրուշի Գրիգորյանին (ծնված՝ 1975 թվականի հունվարի 03-ին) սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 95 (ծածկագիր՝ 07-003-0011-0106) հասցեի 0.05 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության ընդհանուր 212.15 քմ արտաքին (180.17 քմ ներքին) մակերեսով այգետնակը, անասնաշենքը, ծածկը, ջրավազանը, աստիճանն ու պարիսպները ճանաչել օրինական:

2.Հաստատել որոշման անբաժանելի մասը կազմող «Երիցուկ» ՍՊԸ-ի տված հողամասի ու շինությունների հատակագիծը:

3.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. հունիսի 03
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 հունիսի 2020թ. N 148-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի՝ *որոշում եմ.*

1.Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 77-Ն որոշման հավելվածի NN 2, 3 և 6 հատվածներում կատարել վերաբաշխում՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

05.06.2020

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. հունիսի 04
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ
(ՀՀ մարզը, համայնքը)

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ)

N2 02 հունիսի 2020թ.

Կառուցապատող «ԿԱՊԵԼՈ ԲԻԱՆԿՈ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (պետ ռեգիստրի վկայական N03Ա999789,ծածկագիր 49372115) կողմից
(իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Կառուցված արտադրական նպատակային նշանակության բաց բունկերները և ջրավազանը,
(օբյեկտի անվանումը)

որը գտնվում է մարզ Կոտայք համայնքի Բյուրեղավան գյուղ Ջրաբեր 1-ին փողոց 48 հասցեի հողամասում (ծածկագիր՝ 07-055-0212-0091) կառուցված հասցեում՝
(օբյեկտի տեղադրությունը, հասցեն)

համարվում է ավարտված և պատրաստ է շահագործման, որի՝

1. նախագծային փաստաթղթերը մշակվել են «ԳԱԳՆԱԽՇԻՆ» սահմանափակ
(նախագծային կազմակերպության անվանումն օրենքով սահմանված դեպքերում՝ լիցենզիայի համարը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, լիցենզիայի համարը)
պատասխանատվությամբ ընկերության (լիցենզիա՝ N 17011, տնօրեն՝ Գ. Ղազարյան) կողմից.

2. շինարարությունն սկսվել է ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի կողմից
(շինարարության թույլտվություն տվող մարմնի անվանումը)

տրված 23.08.2019թ. N 07 շինարարության թույլտվությունների համաձայն.

3. շինարարությունն իրականացվել է «Ռիգստոն» ՍՊԸ-ի ՇԱԿ/2019-05 կողմից
(գլխավոր կապալառուի անվանումը)

4. օբյեկտի հիմնական ցուցանիշներն են՝ բաց բունկերներ և ջրավազան H=6մ.

5. հատուկ պայմանները _____

ՀԻՄՔԵՐ՝

1) կառուցապատողի դիմումը 25_05_ 2020 թ.
2) ընդունող հանձնաժողովի ակտը 23. 03. 2020 թ.
3) կատարողական փաստաթղթերի ցանկը կամ շինության տեխնիկական վիճակի մասին համապատասխան հետազննության դրական եզրակացությունը 46 թերթ և առկա է տեխնիկական եզրակացություն 3 թերթ :

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար

(ստորագրությունը) Հ. Բալասյան
(անունը, ազգանունը)

Կ. Տ. Ղ. Դանիելյան

Հավելված N 1
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2020 թվականի հունիսի 04 –ի N 148 - Ա որոշման

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N77 - Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՏՎԱԾ N 2-ՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Բաժին	խումբ	դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Տարե կան	Փոփոխ. + / -	Տարի
01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	101246,4	+500,0	101746,4
08	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ	3000,0	-500,0	2500,0

Հավելված N 2
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2020 թվականի հունիսի 04 –ի N 148- Ա որոշման

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N77 - Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՏՎԱԾ N 3-ՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Տողի N	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդ ված	Տարե կան	Փոփոխ. + / -	Տարի
4239	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	2400,0	-500,0	1900,0
4267	Կենցաղային նյութեր	4267	2008,0	+700,0	2708,0

Հավելված N 3
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2020 թվականի հունիսի 04 –ի N 148- Ա որոշման

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N77 - Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՏՎԱԾ N 6-ՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Բաժին	խումբ	դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդ ված	Տարե կան	Փոփոխ. + / -	տարի
01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, որից		101246,4	+500,0	101746,4
			Կենցաղային նյութեր	4267	400,0	+500,0	900,0
08	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ, որից		3000,0	-500,0	2500,0
			Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	1500,0	-500,0	1000,0

05.06.2020

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ